ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 24

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

31.01.2014
Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները.

Օրակարգ

1. 2013-14 ուստարվա առաջին քննաշրջանի արդյունքների ամփոփում: /Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան /:
2. 2013-14 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին: /Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան /:
3. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2013-2014 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակի թեկնածուների առաջադրում: /Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան /:

ԼՍԵՑԻՆ - Օրակարգի 1-ին կետի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը: Զեկուցողը նշեց, որ ձմեռային քննաշրջանը նախապատրաստվել և կազմակերպվել է պատշաճ մակարդակով: Նախապես ուսանողներին ներկայացվել է քննաշրջանի ժամանակացույցը, բոլոր կուրսերում մանրամասնվել է քննությունների և ստուգարքների կազմակերպման կարգը, լուսաբանվել է գիտելիքների գնահատման կարգը: Ուսանողների ակտիվությունը խթանելու նպատակով, դասախոսներից նախապես պահանջվել է կիսամյակի ընթացքում ակտիվ և պատրաստակամ ուսանողներին ստուգարքներ նշանակել առանց լրացուցիչ հարցումների, ինչը դրական դեր է ունեցել շատ ուսանողների համար:

2013-2014 ուստարվա ձմեռային քննաշրջանին մասնակցել է 313 ուսանող: Գերազանց առաջադիմությամբ աչքի է ընկել 20 ուսանող, որոնք փայլել են իրենց ակադեմիական մակարդակով՝ բավարարելով քննող դասախոսների ամենախիստ պահանջները:

Դրան զուգահեռ ֆակուլտետի հինգ մասնագիտությունների գծով /81 ուսանող/ քննաշրջանը փակել են ակադեմիական պարտքերով: Դրանց մի զգալի մասը անբավարար պատրաստվածության պատճառով չի ներկայացել ստուգարքներին և քննություններին: Մի մասը անբավարար է ստացել ընթացիկ քննությունների արդյունքներով: Ընդհանուր գծերով ակադեմիական պարտքերի պատկերը ըստ մասնագիտությունների հետևյալն է.

Պատմություն -- պարտք ունի 37 ուսանող,

Մանկավարժություն և հոգեբանություն -- պարտք ունի 11 ուսանող,

Ֆրանսերեն լեզու -- պարտք ունի 1 ուսանող,

Անգլերեն լեզու -- պարտք ունի 20 ուսանող,

Հայոց լեզու և գրականություն -- պարտք ունի 12 ուսանող:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Աիդա Մարդանյանը, Վաչագան Ավագյանը, Վաչիկ Բրուտյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. 2013-2014 ուստարվա ծմեռային քննաշրջանի կազմակերպումը և արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ - Օրակարգի 2-րդ կետի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը: Զեկուցողը նշեց, որ երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքները ավարտված են: Ուսումնական պարապմունքները կսկսվեն սթ. փետրվարի 3-ից: Պատրաստ են հինգ մասնագիտությունների դասացուցակները: Զեկուցողը նշեց, որ Անգլերեն լեզու և Ֆրանսերեն լեզու մասնագիտությունների 4-րդ կուրսի ուսանողները դասերը կսկսեն սթ. մարտի 3-ից, քանի որ գտնվում են չորս շաբաթ տևողությամբ մանկավարժական պրակտիկայի մեջ, իսկ Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողները՝ սթ. փետրվարի 17-ից, քանի որ գտնվում են երկու շաբաթ տևողությամբ արտադրական պրակտիկայի մեջ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Աիդա Մարդանյանը, Վաչագան Ավագյանը, Վաչիկ Բրուտյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. 2013-2014 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.
Օրակարգի 3-րդ կետի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը:
Զեկուցողը ներկայացրեց այն չափանիշները, որոնք բավարարելու դեպքում միայն ուսանողը կարող է հավակնել անվանական կրթաթոշակի: Առանձնակի շեշտադրվեց ուսանողի անառարկելի բարձր ակադեմիական առաջադիմությունը և հասարակական ակտիվությունը:
Վարդան Ալեքսանյանը «Շառլ Ազնավուրի» անվան կրթաթոշակի թեկնածու առաջարկեց «Անգլերեն լեզու» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Լուսինե Գևորգյանին: Նա վերջին 3 կիսամյակներին առանց ընդհատման ունեցել է գերազանց առաջադիմություն և բավարար չափով մասնակցել է ուսանողական հասարակական աշխատանքներին:
«Ֆրանսերեն լեզու» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Հեղինե Մխիթարյանին զեկուցողը առաջարկեց Մոնթե Մելքոնյանի» անվան կրթաթոշակի: Նա վերջին 3 կիսամյակներին առանց ընդհատման ունեցել է գերազանց առաջադիմություն և բավարար չափով մասնակցել է ուսանողական հասարակական աշխատանքներին:

«Պատմություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող Նարեկ Անտոնյանին Վարդան Ալեքսանյանը առաջարկեց «Վազգեն Սարգսյանի» անվան կրթաթոշակի: Քանի որ Նարեկ Անտոնյանը ունի երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Աիդա Մարդանյանը, Վաչագան Ավագյանը, Վաչիկ Բրուտյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Դիմել մասնաճյուղի տնօրինությանը՝ հաստատելու ՀԳ ֆակուլտետից ներկայացված անվանական կրթաթոշակի ներքոհիշյալ թեկնածուներին.

- Լուսինե Գևորգյան- «Շառլ Ազնավուրի» անվան
- Հեղինե Մխիթարյան- «Մոնթե Մելքոնյանի» անվան
- Նարեկ Անտոնյան- «Վազգեն Սարգսյանի» անվան

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. Ալեքսանյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. Խաչատրյան